

ՇԵՔՍՊԻՐԻ ԵՐԿԵՐԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՑ

ՀՈՎՀ. ՄԱՍԵՀՅԱՆԻ ՇԵՐՍՊԻՐՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Շեքսպիրն իր ստեղծագործությամբ արտացոլել է կյանքը ամբողջ հարստությամբ, իր բազմապիսի հատկանիշներով. նա չի խորշել կյանքի տգեղ երևույթները կոշիլ իրենց անուններով ու անվանումներով: Նրա երկերում լավն ու վսեմը գտել են իրենց պատշաճ որակավորումները: Արվեստը նրա համար մի հայելի է, որ պետք է պահվի բնության առաջ՝ ցույց տալու առաքինությանը իր սեփական դեմքը, մոլությունն իր պատկերը և ժամանակի դեմքին ու մարմնին՝ իր տեսքն ու տիպը: Իր իսկ՝ Շեքսպիրի, խոսքերով ասած նա ամենեն վատ բաները վատ անուններով էլ կոչում է, չմտածելով պատշաճության ու կենցաղագիտական նրբանրկատու թյունների մասին, բայց որքան էլ նա իրապաշտ լինի այս մարդում, գոհակությունը և տգեղությունը տեղ չունեն նրա խոսքի մեջ: Ամենից վատ անունները, որ նա տալիս է վատ բաներին, երբեք գոհակության, տգեղության, անպատշաճության զգացում չեն առաջացնում մեր մեջ: Նրա ընտրած բառերն ու անունները թափանցում են առարկայի խորքը՝ նրա էությունը բացահայտելու իրական հողի վրա իրական աշխարհի գույներով, բայց զրանք սովորական գույներ չեն, որ կարող էին տվյալ պարագային աննկատ մնալ սովորականությանը հատուկ մի անհրաժեշտությամբ: Բոլոր գույները խտացվում են արվեստի պահանջներով ու նրա բարձր ոլորտում, որովհետև չնայած Շեքսպիրի հերոսուհիներին մեկը մի ալլ հերոսի ասում է՝ ավելի նյութ տուր և պակաս արվեստ, բայց դա վերաբերում է առօրյա մի հարցուփորձի և ոչ թե ամբողջ խոսքին: Իսկ հենց այդ պահանջի պատասխանը այս է. «Երդվում եմ, տիկին, որ բնավ արվեստ չեմ բանեցրելում: Այն որ նա խենթ է՝ ճիշտ է, որ ճիշտ է՝ շատ ցավալի է, Եվ ցավալի է, որ այդպես ճիշտ է»: Եվ չնայած խոստանում է խոսքի մեջ արվեստ չբանեցնել, սակայն հենց ամբողջ խոսքը ար-

վեստով է ասվում: Շեքսպիրն այդպես է. կողմնակից է պարզին, հասարակին. բայց այդ պարզը, հասարակը, բնականը սովորական չեն, շատ են բնորոշ ու բարձր, շատ են խիտ ու թանձր:

Արվեստը չափազանցության թշնամի լինելով, այս պարագայում դուգալիզմով է վերջինով, և երկուսը միասին ուղեկից են գաղտնի Շեքսպիրի խոսքի մեջ և միասնանում են մի վեհ ամբողջությամբ: Շեքսպիրը իր խոսքի մեջ արտահայտում է մինչև ինքը եղած մարդկային մտքի ու հոգու ողջ ստեղծագործության արդասիրենքը: Ուղում ևս հաշտվել մարդկային հոգու խորխորատները թափանցող գրողի հանճարի հետ՝ մտածելով, որ դա աստվածատուր եղակի մի շնորհ է, որ երբևիցէ մահկանացուին տրվել է այս լուսնի տակ, իսկ ինչպե՞ս հաշտվել այդքան ծով խմացությունների հետ, որ նա հանդես է բերում իր պիեսներում: Այդ խմացությունները վերաբերում են բնության երևույթներին, աստղաբաշխության, հին աշխարհի դրականությանն ու առասպելաբանությանը, պետական ու ռազմական կյանքին, պատմությանը, հոգեբանությանը, բնագիտությանը, աշխարհագրությանը և այլն: Ու այս ամենը իրենց լանտաններով, նուրբ անվանումներով, որոնք ենթադրում են ահավոր քանակի մի բառապաշար, որ Շեքսպիրը գործադրում է իր երկերում: Այդ բառապաշարի քանակը հասնում է մինչև քսան հազարի: Մի հեղինակի համար սա բացառիկ թիվ է և աներևակայելի քանակություն:

Շեքսպիրը իր ստեղծագործության մեջ կազմել է բազմաթիվ նոր բառեր, իսկ պատրաստի բառապաշարից վերցրած բառերի մեծ մասը սովորական բառեր ու անվանումներ չեն: Առտնին բառերն ու արտահայտությունները ի վիճակի չէին լինի գրսևորելու Շեքսպիրի արվեստի օվկիանոսային մեծությունն ու խորությունը. անհրաժեշտ էր ընտիր, թարմ բառապաշարի ու կապակցությունների մեծաքանակ մի հարստություն, որպեսզի կարելի լիներ արտահայտել մարդկային մտքի ու հոգու բարձր խոչանքները, այրող ու տոչորող կրքերի բռնկումները, հոգեկան ապրումների ծայրահեղ լարվածությունը, բանաստեղծական պատկերների լուսաշող պայծառությունը, ամբողջ մարդկային կյանքը արվեստի լուսարձակով լուսավորված: Եվ նա գործադրեց բարձր ոճի մի այնպիսի բառապաշար, որը Հոմերոսից սկսած առ այսօր ոչ ոք չի կարողացել նվաճել: Անհրաժեշտ էր գեղեցիկը առավել գեղեցկացնել, մռայլը դարձնել դժոխային, վեհը՝ աստվածային, շարն ու խորամանկը՝ դիվային, բարին ու անմեղը՝ հրեշտակային և այս ամենը բնական, իրական հողի վրա, պատճառաբանված ու հիմնավորված:

Շեքսպիրը գրելիս ամեն բառ և արտահայտություն իր ծովածավալ իմաստությամբ և մեծ արվեստով կշռաչափել է, որոշել է, թե որ բառը ինչ թոփչք ու հեռանկար ունի և գտել է յուրաքանչյուրի ամենաճիշտ տեղը: Երբեմն զգալով, որ բառն իր տեղը չէ և չի բացահայտում իր ոճաբանական նպատակադրումները, հերոսների բերանով նա դիտողություն է անում տվյալ բառի կամ արտահայտության վերաբերյալ. «Առ իմ երկնային, հոգեկին պաշտելի, չքնաղագեղ Օֆելիան»... ինչ անպիտան ոճ, հասարակ ոճ է, չքնաղագեղ, շատ հասարակ ոճ է...»:

Սովորաբար ընտրովի բառերով գրված խոսքի մեջ նկատվում է բառերի կիրառության սահմանափակություն, որոշ վերացականություն, կենսական ավիշների պակաս և մանավանդ կրկնության անխուսափելիություն: Բայց Շեքսպիրի ստեղծագործությունն ազատ է այդ ամենից, որովհետև նրա բառապաշարի ընտրությունը պատկերած կյանքի զուգակշիռն է: Կարծես թե Շեքսպիրի նկարագրած կյանքն այլ բառերով հնարավոր չէ պատկերավորել և նրա կերպարները այլ լեզվով էլ չեն կարող խոսել: Շեքսպիրի լեզվական արվեստը դրանով է հոյակապ: Որքան էլ շքեղ ու բարձր է ոճը, որքան էլ հազվագյուտ են բառերն ու ասույթները, այնքան ներդաշնակ են իրենցով դրսևորվող կյանքի հետ, այնքան լցված են կյանքի կենսահյուսվածքով ու հենց տվյալ ներդաշնակությունն է, որ ստեղծում է սնանում է այդ արտաբնական, բայց թանձր բնականությունը, այդ երկնային, բայց չափազանց երկրականությունը: Շեքսպիրը երկրայինն ու երկնայինը համադրել է իր խոսքարվեստով, այնքանով, որքանով որ երկրի վրա նա տեսնում է և իրական գոհակություններ, սրիկայություններ, քսու մատնություններ, դավադրական մարդակերություն, և՛ նույնչափ իրացի երկնային առաքինություններ՝ ազնիվ ասպետություն, սիրո անձնուրացություն, հավատարմության սխրանքներ, բարի ու գեղեցիկ գործեր: Եվ այս ամենն արտահայտված են իրենց համապատասխան լեզվական նյութով՝ ոճական հոյակապ արվեստով:

Շեքսպիրի խոսքարվեստը բարդ է ու խուլական, ուստի և այդ խոսքարվեստը մի օտար լեզվով վերաստեղծելը ծանր ու դժվարին մի գործ է, ստեղծագործական երկունք: Եվ, արդարև, մեր մեծ թարգմանիչը՝ Մասկանյանը, տառապել է շեքսպիրյան երկերը թարգմանելիս: Հայ թարգմանիչը նախապես այն կարծիքին էր, որ մի տասնամյակում կարող է ամբողջ Շեքսպիրը թարգմանել. սակայն 40 տարում հազիվ Շեքսպիրի երկերի կեսը միայն թարգմանեց, որովհետև, ինչպես ցույց են տալիս

փաստերը, Մասեհյանը չի գոհացել մի անգամ թարգմանելով, նա վի-
յամշակել, ստուգել է թարգմանությունները կրկին բնագրի հետ համե-
մատելով, իսկ որոշ պիեսներ երկրորդ անգամ է թարգմանել:

Մասեհյանի առջև լեռնաշափ խոշընդոտներ կային, որոնք բազմա-
բնույթ ու բազմապիսի էին: Կինելով բազմաթիվ լեզուների գիտակ ու
կրթված մի մարդ, նա կարող էր Շեքսպիրի բնագրի ստույգ բովան-
դակությունը թարգմանել հայերեն, եթե Շեքսպիրի բնագրերի առանձին
մասեր, հատվածներ, բառեր զմարտություն իսկ ներկայացնեին, Մասեհ-
յանը այդ զմարտությունները կհաղթահարեր գերմաներեն, ֆրանսերեն,
ռուսերեն և այլ թարգմանությունների միջոցով, որոնք բոլորն էլ կային
| նրա ձեռքի տակ: Բայց Մասեհյանը միայն թարգմանիչ չէր: Նա գիտակ-
ցում էր, որ իր աշխատանքը միայն ժամանակավոր կլանք կարող է ունե-
նալ, եթե իր թարգմանությունները ընթերցող լայն զանգվածների սիրած
ու փայտացած գրքերը չդառնան:

Նա խոսքի արվեստագետ էր և ամբողջովին ընկալելով Շեքսպիրի
խոսքարվեստը, գիտակցում էր, որ ինքն ու Շեքսպիրը հայոց հինավուրց
լեզվով կարող են համարյա անմահանալ, եթե այդ խոսքարվեստը իր
բարձր առանձնահատկություններով զրսևորվի թարգմանության մեջ: Նվ
նա հայերենի ժողովրդին ու մայրենի լեզվին ծառայելու սուրբ ուխտով,
հոգին հանձարի շղթերով լուսավոր, դոսեմարտի բռնվեց բրիտանական
հանձարի հետ, որպեսզի նրան նվաճելով՝ նույնությամբ վերակենդա-
նացնի մի այլ լեզվով, մի այլ ազգի համար:

Նվ նա, դրա համար ունենալով բոլոր անհրաժեշտ տվյալները, լցվեց
այդ տվյալները արգասավորող հզոր ներշնչանքով, ուսումնասիրեց Շե-
քսպիրի լեզվական արվեստի գաղտնիքներն ու նրբությունները և բացա-
հայտեց դրանք:

Այդ գաղտնիքներն ու նրբությունները կարող էր ուսումնասիրել,
վերլուծել և բացահայտել նաև մի արվեստաբան, մի ոճաբան քննադատ,
սակալն Մասեհյանի համար ալգպիսի աշխատանքի լեռնաշափ զմարտու-
թյունը գործի միայն մի մասն էր, նա պետք է այդ գաղտնիքներն ու նրբ-
րությունները արտահայտելու միջոցները ստեղծագործեր, որ Շեքսպիրը
չկորցնեի իր բազմազան ու բազմախորհուրդ արվեստի խոյանքները, որ
նա հնչեր շեփորային իր հնչեղությամբ, որ նա հաղորդվեր հալ ընթեր-
ցողին էլեկտրական իր հաղորդականությամբ և վերջապես, որ ծով զգա-
ցումներով աուցուն նրա խոսքը միևնույն լրջությամբ, արքայական հան-
դիսավորությամբ ու վեհագույն պաթոսով փոխանցվեր հայերենի առանց
աղոտանքի շնչին ստվերարկման:

Ահա անհնարինն ու անկարելին, որ հնարավոր ու կարելի է դառնում միայն եղակիների միջոցով, միայն ընտրյալների ձեռքով: Եվ Մասեհյանը մեղանում այդ եղակին ու ընտրյալը դարձավ ու հավիտենական փառքով պսակեց իրեն:

Մասեհյանը հմուտ հայերենագետ էր այս բառի ընդարձակ առումով. նա շատ լավ գիտեր մեր նոր գրական լեզվի նյութական բույր միջոցներն ու ոճաբանական հնարները: Գիտենալով այդ, նա միաժամանակ գիտակցում էր, որ այդ միջոցներով ու հնարներով անկարելի է Շեքսպիր թարգմանել: Շեքսպիր թարգմանելու համար անհրաժեշտ էին լեզվական հարուստ, բարձր որակի թարմ միջոցներ և Շեքսպիրի ոճին յուրահատուկ մի ոճ, որ մեր նոր հայերենը դեռևս չունի:

Եվ արդարև բնավ մեղանշած չենք լինի մեր լեզվի պատմության առաջ, եթե ասենք, որ 90-ական թվականներին մեր նոր գրական լեզուն չէր ստեղծել գրական այնպիսի մի երկ, որ իր լեզվական հարստությամբ և ոճական բարձր արվեստով նախատիպ հանդիսանար «Համլետի» համար, ու Մասեհյանը այդ եղածը մշակեր ու կատարելագործեր՝ դաժնելով իր ստեղծագործական աշխատանքի հիմքը: Մեր նոր գրական լեզուն այն ժամանակ և նրանից դեռևս մի տասնամյակ էլ հետո ուներ ակնառու թերություններ: Ամենից առաջ չկար բառապաշարի այն պատշաճ հարստությունը, որ ի դոքա լինեք փոխանցելու Շեքսպիրի բառական ծով բազմազանությունը: Բառապաշարի պակասին միանում էր նաև միակողմանիությունը: Հրապարակախոսական, լրագրային և վիպական լեզվով հնարավոր չէր Շեքսպիր թարգմանել, որն ընդգրկում է կյանքի բոլոր բնագավառները: Բառապաշարի պակասին ու միակողմանիությանը լրացնելու էր դալիս որակային բացը: Շեքսպիր թարգմանելու համար նոր որակի բառեր էին անհրաժեշտ: Դրանք կամ պետք է փոխառվեին գրաբարից, միջին հայերենից, արևմտահայերենից, բարբառներից և կամ պետք է ստեղծվեին իբրև նորակազմություններ: Նոր որակի բառերը անհրաժեշտ էին նոր ոճի համար: Բառապաշարի հիշյալ թերություններին ուղեկցում էին նաև մեր լեզվի իմաստարանական համակարգի անկալունությունը, զանազան շերտերի բառերի ոճաբանական կենտրոնախույս ձգտումներն ու համադրության պակասությունը, շարահյուսական ձևերի ճապաղությունը, միօրինակությունը և տարտամությունը, որոնցով անկարելի էր Շեքսպիրի սուր բառախաղերը, թուխքային հոյակապ անցումները, հակասություններն ու իմաստային ընդհարումներն արտահայտել: Այս երեւույթը ժամանակին նկատել է Թումանյանը, որն այդ մասին արտահայտ-

Վրում է հետևյալ ձևով. «... Մեր գրականությունը այն վիճակի մեջ էր, որ նույնիսկ մի կարգին լեզու չունեիր իրան համար, ամեն հեղինակ առանձին լեզվով ու ոճով էր գրում, հորինելով մի ընդհանուր ժխտը, որ անկարող էր վսեմ ներդաշնակությամբ մի բարձր միտք, մի խոր զգացմունք հայտնելու, և հանկարծ աստվածային Շեքսպիրին խոսեցրին հայոց լեզվով, իրար խոհեց թարգմանություններից թարգմանելով «Շեկսպիր», «Օթելլո», «Արքա լիր», «Համլետ» և այլն: Եվ, իհարկե, այդ բոլոր գործերն, իրանց վրա կրելով ժամանակի անկարողության կնիքը, թարգման չդարձան Շեքսպիրի և մեր մեջ, չգիմացան հասարակ բնագաղափարության դատաստանին և շմուռնին ընթերցողի սեղանի վրա, ինչպես վայել էր Շեքսպիրի ձեռքի գործերին»²:

Թումանյանի խոսքը վերաբերում է ութսունական թվականներին, երբ դեռևս Մասեհյանը հրապարակ չէր իջել, սակայն Մասեհյանի հանդես գալու տարիներին փոփոխությունը մեր լեզվի մեջ այնքան մեծ չէր, կամ այնպիսի տեղաշարժեր չէին կատարվել, որ հնարավորություն ստեղծեին «Համլետ» թարգմանել համլետյան լեզվով ու ոճով: Որքան էլ Թումանյանի խոսքը չափազանցություն համարենք, մի բան պարզ է, որ մեր լեզուն չէր հասել Շեքսպիր թարգմանելու որակային այն աստիճանին, որին Մասեհյանը հասավ:

Այս շրջանում իսկապես մենք բանաստեղծական լեզու չունեինք. Շեքսպիրը մեծ բանաստեղծ է և իր լեզուն էլ ամենաբարձր ոճի բանաստեղծական լեզուն է: Հենց այստեղ էլ նշենք, որ Մասեհյանը Շեքսպիրը հայացրեց այդ բարձր ոճի բանաստեղծական լեզվով, որ մենաց աննյաճ ու առ այսօր օրինակելի:

90-ական թվականների սկզբներին Թումանյանը դեռևս որոնումների մեջ էր, դեռևս չկային Խոսեակյանը, Տերչյանը, դեռևս չէին բյուրեղացել մեր նոր բանաստեղծական լեզուն ու ոճը: Ահա հենց այս շրջանում «Համլետի» հայերեն թարգմանությունը, որ արեց Մասեհյանը՝ շոնդալից մի հաղթանակ էր հայոց նոր լեզվի համար: Մասեհյանը հաղթականորեն վերացրեց հայերենի լեզվաոճական թերությունների մեծ մասը. ստեղծեց իմաստարանական կուռ համակարգ, համադրական ոճ, այսինքն՝ հին, նորակազմ, ժողովրդական, արևմտահայ նույնիսկ բարբառային, միջին հայերեն բառերը համադրեց մի ընդհանրության մեջ՝ առանց վերջիններիս տարատեսակ ոճաբանական միտումների ու կենտրոնախույս ձգտումների: Բառերը իրենց նախկին իմաստային տարտամուկությունն ու անորոշությունը մի կողմ թողին և աշնանային պտուղի նման հյութավորվեցին

որողակի իմաստներով ու հուզական բարձր պաթոսով, վեհ ու հնչեղ հանդիսավորութեամբ: Ոչ մի անգամ հայոց լեզվով չէին ասվել այսպիսի խոսքեր:

Հերիք ձեռքերդ այգպես գալարես, հանդա՛րտ կաց, նստի՛ր,
Եվ թո՛ղ տուր, որ ես սի՛րտդ գալարեմ:

Եվ պիտի անեմ, թե կակուղ նյութից հորինված լինի:

Եթե անիծյալ սովորութիւնը

Պղնձացրած չլինի նրան,

Եվ թումբ ու պատնեշ դարձած ամեն զգացմունքի դեմ:

— Ես ի՞նչ եմ արել, որ հանդգնում ես այգպես աղմուկով
բարբառել իմ դեմ:

— Այնպիսի՛ մի գործ:

Որ համեստութեան շնորհքն ու շիկնումն աղավաղում է,

Առաքինութիւնը կեղծ է անվանում,

Եվ անմեղ սիրո սիրուն ճակատից պճղում է վարդը

Եվ նրա տեղը մի պալար դնում,

Որ դարձնում է պսակի ուխտը

Խաղամուկների սուտ երգումներից ավելի խարդախ,

Որ ամուսնութեան դաշինքի միջից քաղում է ոգին,

Եվ դարձնում է անուշ կրոնը բառերի հագներգ:

Երկնքի դեմքը բոցավառված է,

Այո, և այս պինդ, կայուն զանգվածը, թախծալից դեմքով,

Որպես մոտեցած աշխարհի վերջին՝

Վշտահարված է արարքիդ վրա³:

Մասեհյանի սկզբնական թարգմանութիւնների մեջ նույնպես կային լեզվաճական թերութիւններ, ճապաղութիւններ, տհաճ կրկնութիւններ, հնարանութիւններ. օրինակ՝ «Ինձ պես տոհմիկ աղնվականի համար ի՞նչպես կարող ես այդ բանը պահել անվանել, երբ սա չի տարբերվում մի եղ մսուրի մեջ կապելուց: Նորա ձիանքն անգամ ինձնից լավ են խնամված. որովհետեւ բացի նորանից, որ նոքա առատ սնունդ ունին, նորանց վարժեցնում են, և այդ բանի համար ձիավարժներ են վարձում թանկ գնով. իսկ ես, նորա եղբայրը ոչինչ չեմ շահում նորա ձեռքի տակ՝ եթե ոչ աճել, որի համար նորա գոմի տավարները նույնչափ երախտապարտ պետք է լինին նորան, որչափ ես»⁴: Այս բանը նկատել է իր ժամանակին և Հ. Թումանյանը: Բացի այն դիտողութիւններից, որ Թումանյանը մեր հիշա-

տակած իր հողավածում նշում է իրրե թարգմանական պակասություններ,
դիտում է և անպիտանները, որոնք վերաբերում են լեզվաաճական տար-
աամություններ, անորոշություններ և սխալներին: Ահա այդ օրինակները.

Սա...

Տուժեց իր կյանքի հետ իրան հաղթողին

Այն բոլոր հողերը, որոնց նա տեր էր:

(նոր թարգմանությունը. իր տիրած հողերն ու կյանքն էլ հետը տուժեց
հաղթողին):

Նախքան իր նենգավոր արցունքի աղբ

Ջնջվեք բորբոքված նորա աչքերից:

(նորը. Մեկ ամիս շեղած, նախքան բորբոքված նրա աչքերից իր ամենա-
կեղծ արտասուքների աղբ սրբվեք):

Վկա էր կանչում

Մոտ բոլոր երկնային սրբությունները:

(նորը. եվ իր խոսքերը երկնքի բոլոր սուրբ երդումներով Հաստատում էր
նա):

Դու ես միակ ազնիվ մարդը,

Որի հետ, երբեք ես կապված լինեմ:

(նորը. Լսիր, Հորացիո, բեղնից ավելի ուղղամիտ մարդու դեռ չեմ
հանդիպել ծանոթներիս մեջ):

Եթե ոչ՝ ոչ ոք մտքից չի անցկացնի նորան որպես այն փայտե ձին:

(նորը. Թե ոչ՝ կմոռացվի ինչպես այն փայտե ձին):

Եվ իր վիճակն ի՞նչ է, ո՞վ դիտե երբեք,

Եթե ոչ երկիրքը, սակայն մեր խելքով

Եվ մեր մտածությունաց բնական բնթացքով,

Մի ծանր դատակնիք պիտի լինի իր վրա:

Ուրեմն ինձ համար ի՞նչ մի վրեժ է այդ,

Որ նորան մահացնեմ իր քավության մեջ,

Երբ կազմ է և պատրաստ յուր անցքի համար:

(նորը. եվ թե իր հաշիվն ինչ վիճակում է,

Ով է իմանում, բայց միայն աստված.

Սակայն դատելով մեր հանդամանքով և մտածությամբ,

Ծանր է վիճակը: Ուրեմն ի՞նչ վրեժ է, որ զարկեմ նրան,

Ճիշտ երբ իր հոգին սրբվելու վրա է,
Երբ որ հարդարված և պատրաստված է իր անցքի համար):
...Ես գալիս եմ միայն
Բորբոքել եռանդդ, որ մոտ հանգած է:

(Նորը ...Այցելութունն նրա համար է
Որ սրե կրկին գրեթե բթացած մտադրութունդ):
Օհ, միջամտիր նորա և իր կովող հոգու:

(Նորը. Օհ, մտիր նրա ոգորող հոգու և նրա միջև):
Պարոն, սոցա առաջ
Թող իմ ուրացումը կամավոր մեղքի
Ինձ անմեղացնի քո վեհ մտքի,
Այնպես, որպես թե ես ձգած եմ նետս
Կտուրի վրայից և եղբորս զարկած:

(Նորը. Տեր իմ, բոլորի ներկայութունը
Թող դիտավորյալ ամեն շարության այս ուրացումս
Անմեղացնի ինձ քո անհիշաչար կարծիքի առաջ,
Այնպես դատիր ինձ, որպես եթե ես պատի վրայից
Մի նետ արձակած և իմ եղբորս զարկած լինեի):⁵

Այս բաղդատութունը ցույց է տալիս, որ սկզբում Մասեհյանը գործի ժանրութունը չի կռահել. այդ է պատճառը, որ նա ասում է, թե մտադրված է մի տաս¹ տարում ամբողջ Շեքսպիրը թարգմանել վերջացնել: Բայց հետագայում, երբ խորացավ իր գործի մեջ, նկատեց, որ Շեքսպիրը թարգմանելու համար անհրաժեշտ է բանասիրական լայն պատրաստութուն և ամեն մի արտահայտություն հայացնելիս կարիք ունի բաղմակողմանի քննություն, վերլուծություն կատարել՝ ձեռքի տակ ունենալով ահագին քանակությամբ գրականություն: Նա Շեքսպիրի մեծ թարգմանիչ գաղտնալուց առաջ դարձավ նշանավոր շեքսպիրագետ և իրեն համար ըստեղծեց շեքսպիրագիտական հսկա գրադարան: Սրանից հետո էր, որ Մասեհյանի թարգմանությունները դարձան անթերի գլուխգործոցներ, սրանից հետո էր, որ նա զգաց, թե թարգմանությունը, այն էլ Շեքսպիրինը, իսկական ստեղծագործություն է և նվիրաբերվեց այդ մեծագործությանը:

Որքան էլ անհրեքելի էին քննադատության նշած վերոհիշյալ լեզվական թերությունները՝ Մասեհյանը գտել էր Շեքսպիրը հայացնելու հնա-

բազմաբնույթ ուղիներու Անհրաժեշտ էր այդ ուղիները ընդլայնել, հարթել, Եվ իր հետագա թարգմանությունների ու մշակումների մեջ նա հասավ կատարելության բարձրերը, մեր գրական լեզուն հարստացնելով ու ուժավորելով եվրոպական լեզուների չափանիշներով:

Մենք արդեն հիշատակեցինք, որ Շեքսպիր թարգմանելու համար անհրաժեշտ էր նոր որակի բառապաշար. այդ բառապաշարը կամ պետք է քաղվեր հինավուրց հայերենի բոլոր ճյուղերից և անհրաժեշտության դեպքում նաև ստեղծագործվեր: Արդարև Շեքսպիրը իր հանձարի սլացքով թափանցել է կյանքի բոլոր անկյուններն ու խորշերը, նրա համար ուղղակի կամ անուղղակի նյութ են դարձել պատմությունը, արվեստները, գիտությունները, արհեստները, ծովագնացությունը, պալատական ու պետական կյանքի բարդ ու նրբին հարաբերությունները: Նա արքաների շքեղաշուք պալատներից մտնում է աղքատ հատնախորշերը, հանճարներից անցնում է խելահեղներին, լուսավոր ու պայծառ հոգիները վերլուծելուց հետո իջնում է մարդասպանի, դավադիրի, մատնիչի կարային հոգու խորխորատները, նրա երկերում դեր ունեն քաղաքացին ու գեղջուկը, խեղկատակն ու հանճարեղ փիլիսոփան, արքան ու ստրուկը, արյունոտ շուկան ու ասպետը, զինվորականն ու հոգևորականը, պանդուկային պոռնիկն ու բարոյականության աստվածուհին: Սրանք բոլորը առավել կամ պակաս չափով ունեն սեփական բառապաշար և ոճ: Շեքսպիրը բառապաշարի բազմազանությամբ անմրցելի է. նրա խոսքերը վերաբերում են սովորությունների, ողջունների այլևայլ ձևերի, հագուստների ու տարազների, կահույքի, երաժշտության, սրամտության, ռազմական գործի, հավատալիքների, բնության երևույթների, խաղերի, կախարդական ուղիների, առասպելների և այլն և այլն: Ու այս ամենը արտահայտելու համար կան ասլածքի բազմազան ձևեր ու երանգներ, խոսք կառուցելու անհաշիվ եղանակներ, շեշտեր ու հնչերանգներ, տաղաչափական այլևայլ ձևեր: Այս ահավոր բարդ համակարգը անհրաժեշտ էր փոխանցել մի այլ լեզվով, որ անհաղթահարելի գործ էր թվում:

Հայերենը փորձության առջև էր դրված. կամ նա պետք է զորակոչեր իր բոլոր միջոցներն ու հնարները մեծ ճակատամարտից հաղթանակով դուրս գալու և կամ պետք է նորեն պարտվեր, ինչպես որ արդեն պատահել էր մի քանի անգամ դրանից առաջ մինչև Մասեհյանի հանդես գալը: Գուցե հինավուրց ու բազմաճյուղ հայերենը ի վիճակի լիներ վերարտադրելու Շեքսպիրի երկերի ստույգ բովանդակությունը, բայց դա ամենաքիչն է գեղարվեստական գործի թարգմանության համար, որի հիմնա-

կանը բնագրի գրական ու լեզվական արվեստի անկորուստ փոխան-
ցումն է: Եթե առաջինը գիտելիքներ է պահանջում, այս վերջինը չի բա-
վարարվում դրանով: Մեջտեղ է գալիս ստեղծագործական ներքին կարո-
ղության հարցը, որ ամեն թարգմանիչի չի տրվում:

Հովհ. Մասեհյանը իր հարուստ գիտելիքների հետ ի հայտ բերեց
քչերին հատուկ հազվագյուտ ձիրք ու ստեղծագործական կարողություն:

Բառը, լեզվական որևէ արտահայտություն կամ հասարակ մի ձև
միմիայն իմաստի, բովանդակության կամ քերականական հարաբերու-
թյան կրող ու արտահայտող միջոցներ չեն: Դրանք պարուրված են այն-
պիսի բարդ երևույթներով ու առնչություններով, որոնք չափազանց պա-
հանջկոտ ու քմահաճ լինելով հանդերձ՝ ոչ մի ուժի և պարտադրանքի չեն
ենթարկվում: Դրանք ունեն գաղտնիքներ, որ բացահայտվում են, իրակա-
նացվում են այն դեպքում, երբ գործադրողի մեջ հրահրվում է ներքին
ստեղծագործական անհանգչելի կրակ, երբ նա ունի բառը ճանաչելու
հազվագեղ շնորհք ու ճաշակ, կարճ ասած, երբ նա խոսքի վարպետ է:
Կարդալով Մասեհյանի թարգմանությունները, մեզ ամենուրեք ուղեկից են
բոցավառ կիրքն ու ցասումը, մտերմական հոգեբույժ շոյանքները, ատե-
լության լափող հուրը, երգիծանքի ու ծաղրի այրող խարանը, թևավորող
սեր ու գորովանք, թախիծ ու անսահման վիշտ, բերկրանք ու խնդություն
և բաղմամբիվ այլ նուրբ ու անանուն զգացումներ, որ Մասեհյանը փոխ է
առել Շեքսպիրից և հյութավորել հայերեն խոսքը, որ մինչև Մասեհյանը
այդպիսի խոր բովանդակությամբ ու շքեղաշուք արվեստով չէր հնչել:

Մասեհյանը ոչ միայն գտավ ու ստեղծեց Շեքսպիրի լեզվին համա-
պատասխան հայերեն բառեր, այլև դրանք գործադրելու բարդ արվեստը:
Նա չվախեցավ Շեքսպիրի կապակցությունների տարօրինակություննե-
րից, որոնք հայերենի համար կարող էին խորթ ու անհասկանալի հնչել.
այդպիսի կապակցությունները մեծ արվեստագետի հանդգնությամբ նա
փոխադրեց շունդալից հայերենով, որոնք դարձան հայերենի համար ըն-
դունելի ու հարազատ արտահայտություններ և սիրվեցին հայ ժողովրդի
կողմից և հաճախ օգտագործվեցին իբրև թևավոր խոսքեր.

Եվ մեկ անգամ էլ հարձակում գործենք ականջներիդ վրա (6):

Որ իր նախանձոտ գոռոզությունը խթահարված է (7):

Մի հյուպե է դա մեր մտքի աչքը աղոտացնելու (8):

Շիրիմներն իրենց վարձակալներից դատարկվում էին (8):

...Եվ վերջի վերջո հս ստիպվեցա

Դրոշմել դժկամ հավանությունս իր կամքի վրա (11):

Քողեք տակալիին, որ ձեր լոռիթյան քողի տակ կենա (16):
 Կհիշեմ քանի հիշողութիւնք աթոռ ունենա
 Այս խելահեղիւած դնդակի միջում (26):
 Իմ հիշողութիւնս գրատախտակից
 Կընջեմ բոլոր փուշ ու աննշան պատահարները (26):
 Քո սուտի խաշօր այսպես կրոնն ճշմարտութիւնս ձուր (30):
 Օրհնյալ են նրանք, որոնց մեջ արշունն ու դատողութիւնն
 Այնպես համաշափի դուգախառնիւած են,
 Որ լոկ շվի չեն բախտի մատերին (55):
 Պետք է այս ահի ոտքը շղթայենք (64):

Ոմանք կարող են քննադատել և նշել հայերենի ոգուն խորթ արտա-
 հայտութիւններ, սակայն դրանք իրենց թարմությամբ, իմաստների հան-
 դուզն մտեցումներով եկան հայոց լեզուն հարստացնելու և բարձրաց-
 նելու մի նոր որակի՝ ամենադարգացած լեզուների որակի: Մասեհյանի
 շնորհիվ մեր նոր գրականութիւնս լեզուն թոթափեց պարզունակութիւնը,
 սովորականութիւնը, կաղապարայնութիւնը, հասարակութիւնը, իմաս-
 տային նեղութիւնն ու սահմանափակութիւնը և հնչեց այնպես, ինչպես
 շեփորներն են հնչեցնում հանձարեղ երաժշտական նոր ստեղծագործու-
 թիւնը ափիբերան ունկնդիրների առջև:

Մասեհյանը գտավ լեզվի այն զաղտնի հատկանիշները, որոնք սովո-
 րական, մաշված բառը հնչեցնում են անսովոր թարմությամբ, իմաստա-
 յին հարստությամբ ու հեռագնացությամբ, տաղաչափական առնականու-
 թյամբ: Մասեհյանը Շեքսպիրի երկերի հարուստ բառազանձի դիմաց
 նույնպիսի բառազանձ հրապարակ հանեց, այդ բառերի բազմազան, նուրբ
 և հանդուզն նշանակութիւնների գրաւորման հնարները ստեղծեց: Հայե-
 րեն բառերն ու արտահայտութիւնները լիցքավորվեցին կրքերի ու ցաս-
 ման բոցերով, գորովանքի ու կարոտի արցունքներ թափելու ջերմու-
 թյամբ, երգիծանքի ու ծաղրի դաշույններով, սրամիտ կատակախոսու-
 թիւն ու բառախաղերի հաճոյական արտահայտչութիւններով: Սրանք
 պահանջում էին նոր ու թարմ առնչակցութիւններ, ճշմարիտ ու իրական
 կապակցումներ, իմաստային խոր ու հեռագնաց դուգորդութիւններ:
 Մասեհյանը այս ամենը ստեղծեց հայերենի համար դեռևս մեզ անծանոթ
 ու անսովոր մի արվեստով, խտրութիւն չդնելով հայոց լեզվի բազմա-
 դարյան ճյուղավորումների ընձեռած հնարավորութիւնների ընտրութիւն,
 մշակման և օգտագործման մեջ: Նա այս ամենի հետ զուգորդեց նաև իր
 բառակազմական անօրինակ հմտութիւնն ու ճաշակը, հատկութիւններ,

որոնցով նա հայերենը հարստացրեց հարյուրավոր նորաստեղծ բառերով ու բառակապակցություններով: Նա արվեստագետի հանդգնությամբ կերտեց այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք իմաստային հարստությամբ ու նրբերանգների բազմազանությամբ մեզ փոխանցեցին Շեքսպիրի բարդ ու խոլական արվեստը՝ իր իսկ բնագրական ամեն ձևերով ու բովանդակությամբ: Նա հայ ընթերցողին վարժեցրեց չվախենալ Շեքսպիրի մտածողության և այդ մտածողությունն արտահայտելու նոր ու անօրինակ եղանակներից, որովհետև այդ ամենը վերաստեղծեց մի այնպիսի հայերենով, որ իր գրավչությամբ, վեհաքանչ լրջությամբ, սեղմ հավաքությամբ և նորահունչ առնականությամբ հիացնում է ընթերցողին ու լսողին՝ սնելով նրա միտքը, զարգացնելով գեղարվեստական ճաշակը:

Մասեհյանի լեզուն ու ոճը նորահար ու բարձր լինելով մեր գեղարվեստական լեզվի ու նրա ոճի ընդհանուր մակարդակից, զարմանալի հայացի է ու հարազատ: Եվ երբ նկատում ես տարօրինակ փոփոխություններ, շրջումներ, ոճական միջոցների համարձակ խաղեր, միաժամանակ էլ ընկալում ես, որ այդ ամենը հարազատանում են շնորհիվ դրանց արտահայտչական բարձր արվեստի և հայոց լեզվի թաքուն գանձերի ու գեղագիտական հնարների ճշմարտացի հայտնաբերման: Մասեհյանի լեզվական արվեստը նման տարօրինակություններն ու փոփոխությունները սրբագործում և դարձնում է ազգային: Լեզվի ազգային բնույթը չի պայմանավորվում հազարավոր տարիների ընթացքում կրկնված կրկնելով, եղածի տափակ, անհույզ, կաղապարային վերարտադրումով: Լեզվի ազգային բնույթի հատկանիշներն են իմաստաբանական համակարգի նրբերանգների հարստությունն ու խորությունը, բառերի ու արտահայտությունների շքեղ ու ճշմարտացի պատկերավորությունը, հուզական հագեցումը, շարահյուսական սեղմությունը և բազմաձևությունը, խոսքի թափն ու թռիչքը, առնական բարձր պաթոսն ու հնչականությունը: Ինչ ձևով էլ շարահյուսվեն հայերենի բառերն ու արտահայտությունները, չեն կարող հարազատ ու ազգային չլինել, եթե դրանք լիաշունչ դրսևորում են վերոհիշյալ հատկանիշները: Եվ Մասեհյանի լեզուն ու ոճը այս առումով խոր ազգային է:

Մասեհյանի կազմած նոր բառերը աչքի են ընկնում իրենց կազմության ճշտությամբ, լիմաստությամբ, ավարտունությամբ, ձևական զարմանալի կատարելությամբ և հնչեղությամբ: Այդ բառերի պակասը հայերենը զգում էր արդեն անկախ Շեքսպիրի թարգմանությունից: Եվ

այսօր, երբ արդեն դրանց կազմութեան ժամանակից անցել է ավելի քան 50—70 տարի, այդ նորակազմ բառերը հնացման ոչ մի երանդ ու գուշն չեն ցույց տալիս: Այսօր հիշյալ բառերը մտել են մեր լեզվի գեղարվեստական խոսքի գանձարանը իբրեւ նրա ընտիր ու որակավոր բառապաշարի մի անմեռ մասը: Եվ դա շնորհիվ այն բանի, որ Մասեհյանը բառի որակի, նրա հուզարտահայտչական կողմի զգացողութունը հասցրել է Շեքսպիրի նույնպիսի զգացողութեան մակարդակին:

Մասեհյանի նորակազմ բառերը վերաբերում են կյանքի բազմապիսի բնագավառներին: Ամենից առաջ աչքի են զարնում մարդու հոգեկան կյանքին վերաբերող և այն գնահատող՝ բնութագրող բառերը, որոնց կարիքը թարգմանութեան ընթացքում Մասեհյանը խորապես զգացել է. ահա այդպիսի բառերի մի քանի օրինակներ. խանդահար, ոգեվառ, դուրախար, մահադավ, սիրազգաց, գորովահույզ, նախանձահույզ, կաթնալարդ, վատասիրտ, արշուճախնդիր, տենդահույզ, ինքնատանջում, թաներես, մտապաշարվել, անողորմություն, սպիտակալարդ, շուշանլարդ, դիվահոգի, պարտազգացում, շնասիրտ, ժաշտասիրտ, ինքնահարգություն, սրտահերձ, թուլաջիղ, բաշխասեր, հեշտասուն, ջերմաշարժար, գունատասիրտ, շարախմոր, զխասներ, առաքինացույց, բարեհիշություն, սոսկարներ, ցխահոգի և այլն, որոնք իրենց բնագրում զարմանալի իմաստալից ու արտահայտիչ են:

Բայց ոհ, ինչպիսի դժոխք բույներ պետք է ապրի նա,
Որ թե սիրահար, թե խանդահար է (162):

Եկեք ոգիներ,

Դուք, որ մահադավ մտածումներին սպասարկում եք,

Անսեռեցեք ինձ (223):

Դատել անողորմ պաշտոնյաներին

Այս մտազործի և դիվանդի նրա թագուհու (282):

Բայց ո՞վ կա իր հետ:

Իր խենթը միայն,

Որ ջանք է անում իր կատակներով

Փարատել նրա սրտաներձ վիշտը (338):

Մարդիկ կան հոգով այնպես թուլաջիղ,

Որ քնի մեջ էլ խոսում են իրենց գործերի վրա (169):

Սա ցույց է տալիս, տարփոտ բնություն, բաշխասեր մի սիրտ (171):

Գնա, ծածկիր երեսդ, և կարմիր քսիր երկյուղիչ վրա.

Շուշանլարդ լակոտ...

Մահն առնե հոգիդ. այդ քաթան թշերդ ահ են ներշնչում:

Ի՞նչ զորք, քանեքես (274):

Թե մտացածի՞ն մի դաշույն ես լուկ, մի սուտ ստեղծվածք,

Մի ջերմաշառչար ուղեղից ելած (230):

Իսկ ե՞ս, քանճամիտ և ցեխահոգի թշվառականս,

Հալվում, մաշվում եմ, և մտամոլոր խեղճ Զոհնի նման

Անփուլթ իմ դատիս՝ ոչ մի բան ասել չեմ կարողանում (46):

Ինչպես տեսնում ենք օրինակներից, Մասեհյանը այդ բառերը կազմել է մեր լեզվի բառակազմական օրինաչափությունների ստույգ հաշվառումով և շեքսպիրյան բնագրի խորիմաստ բովանդակության ու ոճաբանական վեհասքանչ արվեստի լիակատար բացահայտման նպատակադրություններով, որ իրականացրել է փայլուն հաջողությամբ:

Շեքսպիրը պիեսներում իր հերոսներին խոսեցնում է արհեստների, արվեստների մասին, նրա հերոսները զորականներ են, պալատականներ, արքունիքի, պետական կյանքի հետ կապ ունեցող մարդիկ, որոնք ունեն իրենց յուրահատուկ բառապաշարը. անհրաժեշտ էր հայերենում պակասող նաև այդպիսի բառեր կազմել՝ Մասեհյանը կազմել է դրանք մեծ հմտությամբ՝ նկատի առնելով կյանքի այդ բնագավառի նրբություններն ու յուրահատկությունները: Ահա մի քանի այդպիսի բառերի օրինակներ. զավեշտարան, ձայնաշար, դիմագիր, լարաբուլթ, սրածայն, դիմամարտություն, զինամարտություն, զահանիստ, սպասազգեստ, բանտանոց, արգելանոց, փակարան, զինամարտ, ծոպավորվել, խարսխատեղ, խարըսխափայտ, թղթաբեր, կայթպար, պատժագործում, պահընկեր, հանձնագիր, սխալածայն, երկդիմախոս, երկդիմախոսել:

Ուզում ես ձայնս փորձել՝ սկսած ամենացած նոտայից մինչև
ծայնաշարիս ամենաբարձրը (62):

Նայիր դու այստեղ, նախ այս պատկերին և ապա սրան,

Այս երկու եղբոր դիմագիրներին (68):

Բայց պարկեշտ մարդ չեմ, եթե այս սիրուն երաժշտության

ձարաբույքերը չթուլացնեմ (141):

Եվ եղբայրական այս զինամարտը պատրաստ եմ խաղալ

առանց որևէ մտախոհության (108):

Իսկ ընդհանրապես բնութագրական, որակավորող նորակազմ մակդիրները զարմանալի դիպուկ, խորիմաստ և միաժամանակ չափազանց եհիստ են ու դաժան, եթե բացասական են, նույնչափով վեհ են ու աստ-

վածային, եթե դրական են. բազմահույզ, երկնահամբույր, բարեվետ, սրտաշեն, նավակործան, ծխուն, սիրակառույց, գինեթուրմ, հորանջարեր, մոռացարեր, կնածին, հովաշուք, բազմածախս, վավերիչ, կայծաստիւտ, կսկծուն, սանձագուրկ, բարետոհմ, կաղնեհերձ, երկնածնունդ, մշտապրտույտ, հոգմահույզ, մոնչուն, կոշտալեզու, հավասարաձեռն, իրատես, հրաթաթույց, նախատաշ, որադալթապատ, ստվերաթույր, շեփորաբարբառ, փետրանուշ, զազանագործ, երկրաշաղկապ, զլխամուր, խոզավալել և այլն, որոնք նոր լինելով հանդերձ ունեն գործածության հետանկարներ, արտահայտում են լայն բնդհանրացումներ Ինչպես տեսնում եք, հենց կաղմության ձևով և իմաստով զերծ են ամեն սեթևեթանքից, վերամարածությունից, պերճությունից: Ընդհակառակը ծանրակշիռ են և լուրջ, բնական են ձևով ու իմաստով զարմանալի ներդաշնակ: Մասնհայանք ամեն կերպ ձգտել է բառապաշարի բնորոշությունը պահել Շեքսպիրի բառապաշարին արժանի մակարդակի վրա, բառապաշար, որին խորթ է կենցաղային տափալուծությունն ու նեղ սահմանափակությունը, գործածության տեղայնացումը, վերամարած հոխորտանքը: Վերջերս լուրաբանչուր մակդիրը և համարձակորեն քաշեցեր այլ բառական միջավայրի ու կապակցությունների մեջ, դրանք անմիջապես կզգացնեն իրենց ռճաբանական ուժն ու արժեքը, եթե իհարկե, կտպակցումը համապատասխան ու ճիշտ է: Ահա այդ բառերից մի քանիսը, որոնք իրենց բնագրում զարմանալի թարմություն, բնութագրական խորություն, ձևական կատարելություն և կշռույթ են բերում խոսքին:

Մնացեք բարով, վրենձուն նժույգ, շոնչուն շեփոր,

Ոգեսա թմբուկ և ականջ պատուող սրինգ սրածայն (169):

Պոռթկում են որոտն ու նավակործան փոթորիկները (214):

Թե արդյոք նրանք որոշել էին

Մխուն վերքերի արյան մեջ լողալ (214):

Ամառվա հյուրը, տաճարաթոփա այս ծիծեռնակը,

Իր սիրակառույց բնակարանով ապացուցում է,

Թե երկնքի շունչն իր անուշ բույրով գրավիչ է այստեղ (224):

Եվ երբ այդ մարդկանց գինեթուրմ ոգին

Խողային քնով անզգայանա ինչպես մահվան մեջ (227):

Չե՞ս կարող զեղ տալ մի հիվանդ մտքի,

Եվ արմատացած մի վիշտ դուրս քաշել հիշողությունից,

Ջնջել ուղեղից նրա մեջ գրված վրդովումները

Եվ մոռացաբեռ քաղցր զեղթափով

Հաստակել նրա խճողված կուրծքը այն նեխված նյութից (275):

Փոքրերի համար վտանգավոր է

Ընկնել զորավոր ախոյանների

Շաշուն, կայծասվյուտ սրերի միջև (103):

Կյանքի այլևայլ բնագավառներին վերաբերող, զանազան հասկացու-
թյուններ արտահայտող նորակազմ բառերի մի ամբողջ շարք է Մասեհ-
յանը ձեռնարկել հայոց լեզվին ի լրացում այն պակասի, որ Շեքսպիր
թարգմանողը կարող է զգալ: Բառերը իրենց իմաստաբանական խորու-
նյամբ, արտահայտչական որակով ու գեղեցկակազմ ձևով գեղարվեստա-
կան խոսքի բոլոր տեսակների մեջ օգտագործելով գրողը կամ մի այլ եր-
կի թարգմանիչ խոսքի գեղագիտական ու ոճաբանական շատ պահանջնե-
րի կարող է բավարարություն տալ: Ահա հետևյալ շարքը այդպիսի բա-
ռերի. դիվաբանություն, հեռապատկեր, կանխույթ, խեղդապարան, կեն-
ցադակերպ, դժվարահավանություն, ցախուտ, ցախաստան, ներմուտք,
թառատեղի, լուծընկեր, զուգադեպ, մարգարոտ, երկնագունդ, մանկա-
փոսխ, տարբերություն, ահագոչ, շարամաղթություն, կողաբարշ, ծածկագոր-
ծություն, երկնամաս, քնանոց և այլն:

Մասեհյանը բառաստեղծության նուրբ ճաշակի վարպետ է, այդ նրբ-
բազազացությունը, բառաձևի և նրա ոգու ճանաչումը Մասեհյանի ոճի
կարևոր հատկանիշներից մեկն է: Բոլոր խոսքի մասերի կերտման մեջ նա
գտնում է սովյալ խոսքի մասին հատուկ նրա արտահայտչական թաքուն
երանգները: Մենք արդեն տեսանք գեղեցիկ ածականների շարքը, որոնք
իրենց մակդիրային դերի մեջ զարմանալի նուրբ են ու դիպուկ: Այժմ՝ մի
քանի նորակազմ բայերի օրինակներ. պահակել, արյունազօծել, բոսորա-
ներկել, մտապաշարվել, խթահարվել, կոնծաբանել, հյուարաձակել, տար-
փածել, զուգախառնվել, ծոպավորվել, շաքարօծել, չափաբերել, չբմեղել,
անսևոնել, մեղմափոխել, ծափել, աշկարվել, բնափոխվել և այլն:

Եթե նրանից արյուն է հոսում,

Իր ծառաների երեսը մի քիչ կարյունագոծեմ (233):

Մի այդպես կանգնիր խղճալի կերպով մտապաշարված (233):

...Ոչ ավելի շուտ

Իմ ձեռքն է կարող անթիվ ծովերը բոսորաներկել (233):

Որն իր նախանձոտ գոռոզությունից խթանահարված է (7):

Դուք, որ մահադավ մտածումներին սպասարկում եք

Անսեռեցեք ինձ. լցրեք ինձ այստեղ գանգից դարշապար

Վեներավայրագ անողորմությունամբ (233):

Հայերենի Բ և աճԲ ածանցով որոշ բառեր կիրառվելով միայն բարձր բանաստեղծական խոսքի մեջ, ձևոք են բերել արտակարգ հանդիսավորություն, մեծափառություն, հուզարտահայտչական զարմանալի մի վեհություն, Այդ կարգի բառերի կիրառությունը նույնանման ոճաբանական դերով ու նշանակությամբ մեր ինքնուրույն գեղարվեստական խոսքի մեջ մշակել են Ա. Իսահակյանը, Վ. Տերյանը, Գծվար է այստեղ հետևողական հարցը մեջտեղ քաշել, բայց անհրաժեշտ է նշել, որ հիշյալ կարգի բառերի ոճաբանական այդ հիասքանչ հատկությունները առաջինը հայտնաբերել է Մասեհյանը և կիրառել է խոսքի մեծ վարպետներին հատուկ նուրբ արվեստով:

...եթե իմ վրա արգելք չլիներ

Իմ բանդանոցի զաղանիքներն հայտնել՝

Օհ կարող էի քեզ մի այնպիսի պատմություն անել,

Որի ամենեն թեթև բառն անգամ հոգիդ կտանջեր.

Մատաղ արյունդ կսառեցներ. երկու աչքերդ

Աստղերի նման դուրս կթռցներ իրենց ոլորտից (24):

Մեկ ամիս չեղած, նախքան բորբոքված նրա աչքերից

Իր ամենակեղծ արտասուքների աղբ սրբվեր՝

Արդեն պսակված: Օհ շար արտոռանք (14):

Եվ վերջ պիտի տա այն անպետք կյանքին, որ կուրծքիս մեջ է
Վաղահաս մահի անարդ տուժանքով⁶:

Դուստրս ամենայն հնազանդությամբ ցույց տվավ ինձ այս.

Եվ դեռ ավելին՝ Համլետի բոլոր սիրախոսանքը,

Տեղը, ժամանակն ու միջոցները հանձնեց ականջիս (36):

Իսկ ուրիշները, որ այնքան սաստիկ չեն առում նրան,

Անվանում են այդ քաջության կատղուց (273):

Ծառայում էի սիրուհուս սրտի վավաշանքին (347):

Տա աստված, որ լուկ պետական գործեր, ինչպես կարծում եք,

Լինեն պատճառը, ոչ թե մի կարծիք, նախանձի մի խուլ

Զեղ վերաբերյալ (174):

Կանգ առ, ով պատիւր, եթե մի հնչյուն կամ թե ձայն ունիս,

Խոսիր ինձ (8):

Մեղմություն, քնքշություն, նուրբ հույզեր են առաջ բերում իկ ածանցով կազմված փաղաքշական ու նվաղական նշանակություն արտահայտող բառերը:

Մեղրիկ, Կիպրոսում քեզ շատ կսիրեն (141):

Հաճախ այս բանում պարսավելի ենք,— և շատ փորձված է,
Որ սուրբ երեսով և բարեպաշտիկ շարժուններով
Սատանային իսկ շաքարոծում ենք (49):
Գնում ենք շահել հողի մի շերտիկ (78):
Որից և հետևեցնում եմ, թե այն, ինչ որ դու սեր ես
անվանում, մի ոստիկ է, մի ընձյուղ (133):
Սիրուն շաբիկը լացը կտրում է և ասում՝ «այո»⁷:

Այսօր եթե քննելու լինենք մեր գրողների նորակազմ բառերի ոճա-
բանական ու իմաստաբանական առանձնահատկությունները, կնկատենք,
որ այդ բառերից մի խոշոր մասը մթազնվել, կորցրել է գործածության
հեռանկարները կազմության, ձևական անկատարության և իմաստաբա-
նական աղբատության պատճառով: Թերևս այսպիսի պակասությունները
բացառվեն Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի նորակազմ
բառերի համար: Նույնիսկ Թումանյանի վաղ շրջանի գործերի նորակազմ
բառերը տառապում են այդ թերություններով:

Մասնհյանը գեղարվեստական խոսքի բառակազմության արվեստի
մեջ զուգընթաց է մեր վերոհիշյալ դասական բանաստեղծների հետ,
որովհետև ինքն էլ բանաստեղծ էր այս բառի ամենաստույգ նշանակու-
թյամբ:

Մասնհյանի նորարարական արվեստը չի սահմանափակվում միայն
բառերի նորակերտությամբ: Եթե նա Շեքսպիրի բնագրի այն բոլոր բառերի
դիմաց, որ պակասում էին հայերենում, միշտ նոր բառեր կերտեր, ապա
դժվար կարողանար իր անօրինակ բարձր ոճի լեզուն պահել բանաստեղ-
ծական այդպիսի պատկերավորության, ծանրախոհ լրջության բնութա-
գրումների դիպուկության և վսեմ հանդիսավորության բարձր մակարդա-
կի վրա: Նորակազմությունների առատությունը կարող էր հասցնել որոշ
վերացականության, անորոշության և կապակցությունների բռնազբոսիկ
հարմարեցման, որոնք կվնասեին այն ամբողջական, անխառն ու միա-
ձուլ կերտվածքին, որով Մասնհյանը Շեքսպիրի թարգմանությունները
դարձրել է գրական արվեստի կոթողներ: Մասնհյանը օգտվել է նորարա-
րական մի շարք հնարներից: Բառակազմության տարբեր եղանակներին
ուղեկցում են խոսքի մասերի փոխանցման զարմանալի գեղեցիկ հնար-
ները (գոյականացում, ածականացում և այլն), բառիմաստների նորոգ-
ման և նոր իմաստավորման հատությունը, ժողովրդական, մինչև իսկ
բարբառային բառերի ձևական առանձնահատկությունների օգտագործու-

մը իր նորակազմութունների մեջ և գրական լեզվին մինչև այդ անհարազատ լեզվական միջոցների գրականացումը և այլն:

Մասնհշյանը հանդուգն է մի խոսքի մասը մի այլ խոսքի մասի նշանակությամբ կիրառելու մեջ: Նա չի վախենում, որ դա կարող է օտարություն ու խորթություն երանգ տալ արտահայտություններու նա այնպես է օգտագործում մեր լեզվի տարրեր հուղավորումների բնձեռած միջոցները, որ տարօրինակություն ու խորթությունը փոխակերպվում են անսովոր թարմության և միանգամայն արդարացնում են նրա նպատակադրումները. օրինակ՝

Իսկ ես կարծում եմ, որ մեկ գլխավոր պատճառ կա միայն,

Այն է, հոր մահը և մեր խիստ հապենալ ամուսնանալը (34):

Հապենալ մակրայը այստեղ կիրառված է իր խոսքի մասային նշանակությամբ, իսկ հետևյալ տողի մեջ հապենալը գոյական է.

Պետք է քեզ իսկույն հրատապ հապենալով ճամփե այստեղից (7):

Անշուշտ հապենալ բառը դեռևս իրրե գոյական այնքան էլ խորթ ու տարօրինակ չէ մեր լեզվի համար, մանավանդ որ կիրառված է գործիական հոլովով: Իսկ հետևյալ օրինակում արդեն նույնատիպ մի մակրայի գոյականացումը Մասնհշյանի ժամանակ նույնիսկ վերանորոգում էր.

Այնքան, որքան մարդ միշակ շտապով մեկ հարյուր համրե (16):

Բարի ճանապարհ, թող ձեր շտապը ապացույց լինի (11):

Որպիսի շտապ արտափայլում է նրա աչքերում (214):

Առաջին օրինակում շտապը նորություն չէր լինի, եթե մակդիր շուեննար, իսկ երկրորդ և երրորդ օրինակներում արդեն իսկական հանդուգն վերանորոգում է, որովհետև զրաբարում շտապ բառի առաջին նշանակությունը գոյական է (արտորանք, շտապմունք):

Նրա վիճակը գութ է դուրս բաշում

Պղինձ կուրծքերից և ժայռ սրտերից (553):

Եկեք, լսեցի՞ք այս մարդու ձայնը գետնավորիցը (27):

Մեծ Հիբլանիայի անապատները

Եվ լայնածավալ Արարստանի ամայինները

Այժմ դարձել են մեծ պողոտաներ (227):

Ամայի ածականը այստեղ շատ հաջող գոյականացվել է անապատ բառից տարրեր անմարդարնակ տարածություններ նշանակելու համար. սրա հետ համեմատիք սրտացավ բառի հետևյալ գործածությունը:

եմ մտածել, թե մի պարզ քնով մենք վերջ ենք տալիս
Այն սրտացավին և բյուր բնական անձկություններին (50):

Այս դեպքում քախիծ, կարոտ և հոմանիշ այլ բառերը չէին ունենա
այն ուժն ու թարմությունը, որ տվյալ պարագայում հանդես է բերում
սրտացավ բառի գոյականացումը:

Մասեհյանը մեծ գիտակ է նաև հայերենի բառիմաստների նրբե-
րանգների հարստության և նրանց ոճաբանական կիրառության արվես-
տին: Նա որոնել է ու գտել հայերեն բառերի նշանակությունների հարս-
տացման, զարգացման ու նրանց ընդգրկման սահմանների ընդարձակ-
ման ուղիները և զեղարվեստական գործածության հնարները: Նա մեծ
հաջողությամբ փոփոխել ու նոր իմաստավորման է ենթարկել ընդհանուր
գործածական բառերը, որովհետև նա չի բռնադատել իմաստները և չի
բռնազրոտել, այլ ճանաչել է հայերենի իմաստաբանական համակարգի
ոգին:

Այս դեպքում բառերը ձևով մնում են նույնը, բայց նոր իմաստավոր-
ման են ենթարկվում, վերանորոգվում և դրա հետ միասին ձեռք են բերում
ոճաբանական այլ գույներ ու երանգներ: Այստեղ էլ լեզուն իր քմայքներն
ունի, որ պահանջում են հմտութուն ու վարպետություն: Նոր իմաստա-
վորումը չպետք է պոկվի բառիմաստների այն ընդհանուր շղթայից,
որոնց օղակները այս կամ այն չափով միմյանց հետ առնչակցվում են,
մի ընդհանուր առանցք ունեն. այսպես նոր իմաստավորումը կարող է
անորոշության հետ բերել և ճապաղություն, այսինքն՝ բառի հուզական
նշանակությունը կհանգչի իմաստի բռնազրոտման հետ: Մասեհյանը և՛
գիտակցաբար, և՛ խոսքարվեստի ներքնաղգացողությամբ ճանաչում է
բառի միմյանց հետ զուգակցվող այդ երկու հատկանիշները և դրա շնոր-
հիվ, սայթաքումները հասցնում է նվազագույնի՝ բառիմաստի նորոգման
այս բարդ գործի մեջ: Միշտ բառի առարկայական և հուզական նշանակու-
թյունները լրացնում են միմյանց և ի վերջո նպաստում է այն նոր, ծան-
րակշիռ ու իմաստալից խոսքը:

Ջրկվեցա կյանքից, թագից, թագուհուց.

Քաշվեցա մեղքիս բողբոջանքի մեջ (25):

Ասածներիդ և արածներիդ մեջ խնամություն չկա (190):

Ես մոռացել եմ երկյուղի համը (277):

Դեռ կա ավելի խորիմաստ մի բան (339):

Ընթերել եմ կուշտ արհավիրքներով (277):

խորհուրդս, որի մարդասպանութիւնն անբռնար է դիտ,
Այնպէս ցնցում է իմ մարդ էակի խեղճ պետութիւնը (219):

Պետութիւնն բառը այստեղ նշանակում է հոգեկան կառուցվածք, ներ-
քին էութիւն: Որքան էլ հեռացել է հայերեն բառը իր իմաստաբանական
համակարգից, այնուամենայնիւ չեն կտրված այդ համակարգի կապերը,
և մանավանդ թարգմանիչը ցանկացել է Շեքսպիրի հետեզուսթյամբ ցույց
տալ, որ մեր հոգեկան կազմն ու կառուցվածքը մի իշխանութիւնն է, որ
տիրում է մեր բոլոր արարքներին:

Օրհնյալ են նրանք, որոնց մեջ արշունն ու դատողութիւնն

Այնպէս համաչափ զուգակառնված են,

Որ լոկ շվի չեն բախտի մատերին (55):

Դա առաջարկն է մութ նախեղանքը լիտանքի և խենեշ

Մտերի մի ամբողջ պատմութիւն (143):

Եվ իսկայնս սա շատ ակներև և անբռնազրոտ առաջադրու-
թիւն է (142):

Պարզ պատրվակներ, ապստամբութեան

Եվ խուսափելու պարտաւնեւներ են (329):

Եվ ահա մշուսը հրի չար աչքերը

Հայանում են, թե սիրտն ինչ կտավից է (352):

Նախադասութիւններից պարզ երևում է, թե որքան նրբորեն է իմաս-
տավորել ընդգծված բառերը. օրինակ՝ հայտնի է, որ նյութ բառը կտոր
նշանակում է, բայց որ կտորը կարող է նյութ նշանակել, սովորական չէ,
այսինքն ընդհանուրը տվյալ դեպքում մասնավոր դառնում է, բայց հա-
կառակը չի լինում, նույնպէս և արշուն բառը անուղղակիորեն զգացում
իմաստը ունի, համեմատոր. արշունը եռ է գալիս, բայց արշունը ուղղակի
զգացման նշանակութեամբ՝ իմաստափոխական խիզախ նորութիւն է:
Արշունը հիմա սկսում է իշխել (150): Բերված օրինակներից մութ և
անարտահայտիչ է առաջադրութիւն (ենթադրութիւն) բառը:

Մասնհայանը վարպետութեամբ օգտվում է հին բառերի մթագնած
նշանակութիւններից և վերանորոգում է դրանք: Ճիշտ է, դրանց մի մա-
սը ժամանակակից ընթերցողի համար աղտոտ է դեռևս, բայց մեծ մասը
բնագրում հասկանալի են ու հարազատ՝ շնորհիւ ոճաբանական գեղեցիկ
կիրառութեան. ահա մի քանի օրինակներ.

Աշունքի վերջին, երբ մաքիները վարար դառնալով

Սկսան ընկնել խոյերի ետև... (511):

Տա աստված, որ լոկ պետական գործեր, ինչպես կարծում եք,
Լինեն պատճառը, ոչ թե մի կարծիք, նախանձի մի խուլք (174):

Քաղաքագետ որդերի մի համագումար

Հենց այս բուպիս նրանով է զբաղված (76):

Բոլոր ձիրքերիդ համագումարը

Այնպես չէր շարժում նրա նախանձը, ինչպես այդ մեկը (89):

Աշխարհի բոլոր ունայնությունների համագումարը

Ինձ չէր հրապուրի (98):

...Այսպես քնի մեջ մի եղբոր ձեռքով

Ձրկվեցա կյանքից, թագից, թագուհուց.

Քաղվեցա մեղքիս բողբոջանքի մեջ

.....Ուղարկվեցա համադատվության (25):

Նորարարություններ են նաև Մասեհյանի բառակապակցությունների բաղմապիսի շարքերը, որոնք մեր լեզվի մեջ բացարձակապես չեն եղել: Բառակապակցությունների առանձին անդամները երբեք միմյանց հետ չէին կապվել, բայց Մասեհյանը դրանք այնպես մոտեցրեց միմյանց, որ դարձան Շեքսպիրի խորախորհուրդ մտքերի և նրա լեզվի ոճաբանական արվեստի հրաշալիքներն արտահայտելու գեղեցիկ և զորավոր միջոցներ: Որքան էլ դրանք նորույթներ են, սակայն չկան այս դեպքում անխուսափելի անորոշություններ, օտարոտի անբնականությունները: Մասեհյանը մեծ վարպետ է այս բնագավառում լեզվի անհաղթահարելի քմայքները սանձելու և անհաշտելի տարրերը միմյանց հետ հաշտեցնելու, որովհետև նա, ինչպես ասվեց, վարպետ է բառերի իմաստային նրբությունների և ոճաբանական բաղմերանգ հատկանիշների օգտագործման մեջ: Համլետի մայրը Համլետին ասում է.

Ես հասկանում եմ բառերիդ միջի կատաղությունը, բայց ոչ բառերը
(186):

Մասեհյանը կարողացել է հայերենի բառերով ու բառակապակցություններով որսալ Շեքսպիրի բառերի միջի այդ կատաղությունը, մի բան, որ թարգմանիչին ներկայացող ամենադժվարին խնդիրն է: Այդպիսի մի քանի օրինակներ վերևում տրված են. ահա մի քանիսը ևս.

Վճռականության բնածին գույնը ախտաժեխում է (50):

...Իմ հիշողության գրատախտակից

Կջնջեմ բոլոր փուլ ու աննշան պատահարներ...

Եվ քո պատկերը կապրի մեն-մենակ

Ուղեղիս գրքի և հատորի մեջ (26)։

Այժմ քանի որ համառոտումը խոսքի ողին է
եվ ճապաղումը նրա անդամներն ու գրաի դարդը,
ես կարճ կխոսեմ (35)։

Նրա հոգու մեջ մի որոշ բան կա,

Որի վրա վիշտը թուխսի է նստել (52)։

Աչքերիդ միջից ողիղ խուժում է վաչքենի թափով (69)։

Այս ոչինչը շատ ինչից շատ է (85)։

Ինչպես տեսնում ենք, Մասեհյանի նորարարությունը չի սահմանափակվում լուի նորակազմ բառերի շրջանակներում, նա այդ բառերը իբրև լեզվի գեղեցիկ շինանյութ համարձակ նետում է կառույցի մեջ այնպես, որ մի պահ թվում է, թե չպետք է հարմարվեր կառույցի ընդհանուր ներդաշնակությանը։ Սովորական վարպետը գրանք այնպես կդներ, որ ստացվեին հարթ մակերեսներ, ուղիղ անկյուններ ու դժևր։ Բայց Մասեհյանը ավյալ գեղարու հետևում է իր մեծ ուսուցչին, նա սիրում է հանկարծակի բեկումներ, գեղեցիկ անհարթություններ, շարվածքի անսովոր ձևեր, թռիչքային անցումներ, որոնք և՛ մասերի, և՛ ընդհանրության մեջ դասական մի զարմանահրաշ գեղեցկությամբ ու վեհությամբ են զարդարվում։

Այս է, կարծում եմ, մեր պատրաստության բուն նպատակը,

Մեր հսկողության գրգապատճառը

եվ երկրի բոլոր այս հապշտապի և իրարանցման

բուն շարժառիթը։

Միևնույն նշանակության համար իրար մոտ են բերված իմաստային տարբեր նորերանդներով և ոճարանական յուրահատուկ արտահայտություններ հոմանիշներ. իսկ հապշտապ բառի նորությունը և գոյականացումը իբրև իրարանցում բառի հոմանիշ՝ վերացնում է ամեն սովորականություն և արտահայտությանը տալիս ընդհանրացման զորություն։

Եվ այս ամենի հետ նա զուգակցում է հայոց լեզվի բառապաշարի գեղես քիչ գործածության մեջ մտած և, ինչպես Շեքսպիրն է ասում, հոգին չհանված բառերի մի խոշոր զանգված, որ այդ նորարարություններ հետ ստեղծում են շքեղաշուք մի հայերեն։

1. Վիլյամ Երասպիր, Ընտիր երկեր, հ. I, թարգմ. Հովհ. Մասեհյանի, Երևան, 1951, էջ 35: Այսուհետև տրվող էջերը հիշյալ հատորինն են:
2. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. IV, 1951, էջ 25—26:
3. Երասպիրի վերահիշյալ հատորը, էջ 67—68:
4. Վ. Երասպիր, Ինչպես կուզեք, Թիֆլիս, 1895, էջ 5:
5. Տե՛ս մեր հիշատակած Երասպիրի հատորի հետևյալ էջերը 7, 14, 20, 34, 56, 65, 69, 106:
6. Երասպիր, Ռոմեո և Ջուլիետ, Թեհրան, 1962, էջ 34: Մնացած էջերը պատկանում են վերն հիշատակած հատորին:
7. Նույն տեղ, էջ 30: